ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՇԵՍԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ. ՄԱՐԴԸ, ԻՆՉՊԵՍ ՈՐ ԿԱՐ (1921–1977)*

Ես չեմ կարող Հարություն Մարտիրոսյանի խտացրած կերպարը վրձնել այնպես, ինչպես մոտ մեկ տասնամյակ առաջ դա կատարեց մեր ինստիտուտի մեկ այլ երախտավոր՝ դոկտոր Գևորգ Տիրացյանը, իր գործընկերոջ, սերնդակցի, գուցե նաև բախտակցի համար:



Հ. Մարտիրոսյանի մասին իմ տպավորություններն ու հուշերը կարող են լինել աշակերտի, կրտսեր ընկերոջ կամ աշխատակցի, որ նրան ճանաչել է մեծամասամբ աշխատանքային պայմաններում, գիտարշավներում, որտեղ մարդն անկաշկանդ է և իրեն դրսևորում է ամբողջովին:

Հ. Մարտիրոսյան հնագետը և Հ. Մարտիրոսյան մարդը՝ անքակտելիորեն շաղկապված են միմյանց: Մարդը՝ գիտնական էր, և գիտնականը՝ մարդ, բառիս ամենալայն իմաստով:

Մտավորական հորից ժառանգելով բնական խելք, պոետիկ հոգի և բարձր ինտելեկտ, Հ. Մարտիրոսյանը հնարավորություն է ունեցել զարգացնելու դրանք գիտության ու մշակույթի կաճառում՝ Լենինգրադի բարենպաստ միջավայրում՝ շփվելով ժամանակի մեծագույն գիտնականների հետ:

Բնատուր ընդունակությունների, անալիտիկ մտքի և անխոնջ աշխատասիրության շնորհիվ, Հ. Մարտիրոսյանն օժտված էր ուժեղ ինտուիցիայով, որն այնքան անհրաժեշտ էր ուսումնասիրող հնագետին: Այդ էր պատճառը, որ իր կարճ կյանքի ընթացքում կարողացավ "թեթևությամբ" շարադրել այնպիսի ծանրակշիռ գրքեր, ինչպիսիք են՝ "Раскопки в Головино" *(1954),* "Город Тейшебаини" *(1961), կոթողային՝* "Армения в эпоху бронзы и раннего железа" *(1964), գիտահանրամատչելի՝ "Քարի դարից Ուրարտու" (1971), "Հայաստանի նախնադարյան նշանագրերը և նրանց ուրարտա-հայկական կրկնակները" (1973), "Գիտությունն սկսվում է նախնադարում" (1978), "Հայաստանի հնագիտական հուշարձանները" շարքում՝ "Ուշբրոնզեդարյան բնակավայրեր և դամբարանադաշտեր" (№ 2, 1969), Հ. Ռ. Իսրայելյանի համահեղինակությամբ՝ "Գեղամա լեռների ժայռապատկերները" (№ 6, 1971),* "Аргиштихинили" *(№ 8, 1974), "Գեղամա լեռների ժայռապատկերները" (№ 11, 1981) և բազում հոդվածներ:*

Ի դեպ, նա տիրապետում էր հայերենին և ռուսերենին հավասարաչափ, գրավոր խոսքում էլ նույնքան գրավիչ էր: Գիտական բարձր մակարդակ ունենալով հանդերձ՝ գրում էր պարզ, հասկանալի, պատկերավոր և այնքան գեղեցիկ, որ ընթերցողը մինչ այժմ էլ ներքուստ, չի կարողանում այն ընդհատել: Սա նաև հոգու հարց է:

Հ. Մարտիրոսյանը գիտության մեջ շռայլ մարդ էր. թե՛ բանավոր զրույցների ժամանակ, և թե՛ գրավոր աշխատանքները խմբագրելիս, չէր զլանում իր գիտելիքները հաղորդել, նույնիսկ բաժին հանել ուրիշներին, քանի որ վախենալու ոչինչ չուներ. պաշարներն անսպառ էին: Եվ իզուր չէր, որ ժամանակին լենինգրադյան դպրոցի անվանի հնագետներից մեկը, շատ դիպուկ նկատել էր, թե մտքերը նրանից հորդում են այնպես, ինչպես առատության եղջյուրից:

Անսահմանորեն սիրում էր իր մասնագիտությունը, խստապահանջ էր իր և ուրիշների նկատմամբ: Կարողանում էր ոգևորվել յուրաքանչյուրի հաջողությամբ և ոգևորել մյուսներին: Ուրախությունը մեծ էր լինում դաշտային աշխատանքներից հետո, երբ համընդհանուր քննարկման էին դրվում նոր, արժեքավոր գտածոները (պետք է խոստովանեմ, որ Մարտիրոսյանից հետո, երբ Լոռի Բերդում հայտնաբերվում էին համաշխարհային նշանակության առարկաներ, ուրախությունս փոխվում էր թախծի ու ափսոսանքի, թե ինչու նա չտեսավ այդ ամենը): Նրան հետաքրքրում էին ոչ միայն իր ղեկավարած բաժնի աշխատանքները, այլև՝ ողջ ինստիտուտի: Բավական խոր գիտելիքներ ունենալով, այսպես կոչված, վաղ հայկական, անտիկ և միջնադարյան հնագիտությունից՝ այնուհանդերձ, դուրս չեկավ իր նախընտրած վաղ հնագիտության շրջանակներից: Քաջածանոթ էր հայկական մատենագրությանն ու հայկական ժողովրդական բանահյուսությանը, որոնք լայնորեն օգտագործում էր իր աշխատություններում:

Որպես բաժնի վարիչ՝ Հ. Մարտիրոսյանն "ազատ" էր թողնում կրտսերներին իրենց գիտական դեգերումներում: Այսպիսով, յուրաքանչյուրն իր անհատական մոտեցումն էր դրսևորում տվյալ նյութին կամ հարցին: Չէր միջամտում այնքան ժամանակ, մինչև հոդվածը կամ ատենախոսությունը ներկայացնում էին իրեն: Այստեղ՝ արդեն կարդալու ընթացքում, սկսում էր ոգևորվել և ուղղություն տալ, միաժամանակ լրացումներ կատարել տողերի միջև ու աշխատանքը ձևի բերել: Երբ շարադրանքը չէր բավարարում իրեն, կատակով ասում էր. "Էս ի՞նչ է, փնթոշերեն ե՞ս գրել":

Նա գիտեր գնահատել մարդուն, նրա աշխատանքը, պետք եղած դեպքում բարձրացնել նրան ու մեծարել: Երբ հավանում էր ներկայացված գործը կամ դրա առանձին հատվածները, անպայման արտահայտում էր իր գոհունակությունը, լուսանցքներում թողնում ջերմ և խրախուսական արտահայտություններ՝ հավատ ներշնչելով երիտասարդ հետազոտողին իր ուժերի նկատմամբ: Հաճախ այցելուների, հյուրերի առկայության դեպքում, ինստիտուտում կամ գիտարշավներում չէր զլանում իր աշխատակիցներին ներկայացնել մեկ առ մեկ, նշելով թե ով ինչով է զբաղվում: Բարձր

էր գնահատում գործընկերներին և հաշվի էր նստում նրանց հետ՝ յուրաքանչյուրին գնահատելով ըստ իր արժանիքների: Այստեղ նույնպես
չէր վախենում, թե կարող է ստվեր ընկնել իր վրա: Նա գիտեր, որ դրանով ավելի է բարձրանում հենց ինքը՝ ղեկավարը, ինչը, ցավոք, բոլորը չէ, որ հասկանում են:

Արգիշթիխինիլիի պարսպի մոտ. ձախից աջ՝ Ռաֆիկ Թորոսյան, Հասմիկ Իսրայելյան, Նիկոլայ Հարությունյան, Հարություն Մարտիրոսյան, Սեդա Դեվեջյան, Անատոլի Կիֆիշին, Կորյուն Ղաֆադարյան, 1966 թ.:

Կարող էր ժամերով, առանց հոգնելու խոսել հնագիտությունից: 1960–70-ական թվականներին, աշխատանքից դուրս էինք գալիս բոլորս միասին և անշտապ քայլերով, խմբով տուն գնում: Մեր ընկերներից՝ Ռաֆիկ Թորոսյանը, ամբողջ ճանապարհին հնագիտությանը վերաբերող իր անվերջանալի հարցերով զբաղեցնում էր նրան՝ սպունգի նման ներծծելով ամեն մի խոսքը: Դժբախտաբար, նրա ամենախոստումնալից աշակերտները՝ Ռաֆիկ Թորոսյանն ու Հասմիկ Իսրայելյանը, շատ կարճ կյանք ունեցան և չհասցրին իրականացնել իրենց բազում մտահղացումները:

Հիմա, երբ տարիների հեռվից, վերհիշում եմ Հ. Մարտիրոսյանի կյանքից որոշ դրվագներ, մտածում եմ, որ ինչ-որ տեղ մենք նրան լավ չհասկացանք: Կյանքի վերջին տարիներին, երբ վատառողջ էր, գիտարշավների ժամանակ, ցերեկները քիչ էր լինում պեղավայրում. աշխատում էր բազայում: Սակայն երեկոյան դեմ, երբ շոգը մեղմանում էր Արգիշթիխինիլիի "տիրակալը" միայնակ, դահուկային փայտով, սպորտային համազգեստով, դանդաղ, շրջում էր բացված քաղաքի փողոցներով, վերականգնելով քաղաքն իր մտապատկերում և դա մեծ հաճույք էր պատճառում նրան:

Մի օր, երբ այսպես շրջելով հասել էր պեղավայր, տեսավ, որ աշխատանքներն ավարտել ենք ժամանակից տասը րոպե առաջ: Վիրավորանքի այնպիսի պոռթկում ունեցավ, որ բոլորս ուղղակի քարացանք: Հետագայում մենք դա վերածեցինք զավեշտի՝ առանց հասկանալու, որ նա շտապում էր, ուզում էր շատ բան հասցնել: Բայց մենք այդ ժամանակ ջահել էինք ու առողջ՝ նրան հասկանալու համար:

Ամռան գաղջ երեկոներին, երբ արևը մայր էր մտնում Արգիշթիխինիլիի բլրաշարի ետևում, հավաքում էր բոլորիս, բարձրանում էինք բլրի լանջը կամ զբոսնում ամայի ճանապարհով՝ խմբերգելով իր սիրած հայկական ժողովրդական երգերն ու մեղեդիները, ապա ուշ գիշերին վերադառնում տուն (բազա): Հ. Մարտիրոսյանը պոետիկ հոգի և արտաքին ուներ: Նրբազգաց էր և ռոմանտիկ: Փայլուն հռետոր էր. խոսում էր կազմակերպված՝ կարևորը երկրորդականից զատելով: Խոսքը ծանրակշիռ էր և հավատ էր ներշնչում: Ազդեցիկ մարդ էր ընդհանրապես և ինչքան էլ մտերիմ լինեին հետը, անկարելի էր ակնածանքի ու հարգանքի սահմանը չպահել: Եվ հենց դրա մեջ էր նրա հմայքը:

Տպավորիչ էին մորից՝ տիկին Թագուհուց ժառանգած նրա՝ սպիտակ, գանգուր, գոռոզ մազերը, շեշտված կզակը: Մի անգամ կանգառում հանդիպեցինք, խոսեցինք. ինքը հեռացավ: Տեսնեմ, մի կին վազելով մոտեցավ ինձ և հարցրեց՝ ընկերուհի, այդ մարդը Շիրա՞զն էր: Ես ծիծաղեցի և ասեցի՝ ո՛չ, բայց նրա հայրենակիցն է:

Հ. Մարտիրոսյանը մշտական բարեկամներ ուներ, բայց մշտական թշնամիներ չուներ: Ժամանակ առ ժամանակ կարող էր որևէ մեկից նեղանալ ինչ-որ արարքի համար և այդ մարդը դառնում էր "թշնամի": Բայց բավական էր, որ նույն մարդը գար իր մոտ ցավերը պատմելու (կարևոր չէր աշխատանքային, թե անձնական), միանգամից հալվում էր և աշխատում ամեն կերպ օգտակար լինել: Նա մեծ երեխա էր:

Խանդոտ էր. վա՛յ նրան, ով իր մտերիմներից կհանդգներ բարյացակամ վերաբերմունք դրսևորել իր, այսպես կոչված, ժամանակավոր "չսիրած" մարդուն: Մի անգամ տնօրենի աշխատասենյակում ժողով էր, ես մի փոքր ուշացած մտա. նստելու տեղ չկար, բազմոցին նստածները սեղմվեցին և ինձ տեղ տվեցին: Ժողովից հետո խռովել էր ինձանից: Պարզվեց, որ ես այդ րոպեին նստել էի իր համար անցանկալի մարդու կողքին:

Պաշտում էր իր ընտանիքը, երեխաներին, որոնց մասին խոսում էր անթաքույց հպարտությամբ, դեմքի ուրախ արտահայտությամբ: Հյուրասեր էր. սիրում էր հրավիրել իրենց տուն, մանավանդ նոր տարվա առաջին օրը բոլորիս ներկայությունը պարտադիր էր: Շատ էր շոյվում, երբ գովում էինք տիկնոջ՝ տիկին Սեդայի պատրաստած իսկապես համադամ կերակրատեսակներն ու խմորեղենները: Ընտանեկան և նյութական դժվարությունները չէին ընկճում նրան. թոռներին սիրում էր անսահման, նրանց համարում էր իր հարստությունը:

Արգիշթիխինիլի բլրի վրա. ձախից աջ. Օնիկ Խնկիկյան, Լևոն Պետրոսյան, Ռաֆիկ Թորոսյան, Սեդա Դեվեջյան, Հասմիկ Իսրայելյան, Հարություն Մարտիրոսյան, Հարություն Մնացականյան, 1975 թ.:

Հ. Մարտիրոսյանից մենք սովորեցինք բարեխղճություն՝ գիտական աշխատանքում, հարգանք՝ գործընկերոջ նկատմամբ և ընկերական սերտ հարաբերություններ: Շատ էր սիրում ու գնահատում երիտասարդներին, թեև ինքն էլ չհասցրեց տարեց դառնալ և կյանքից հեռացավ վաղ՝ 56 տարեկան հասակում: Կարող էր այժմ էլ մեզ հետ լինել և գուցե արդեն իրագործած լիներ իր մեծ երազանքը՝ գրել "Հայաստանը և Արևելքը" խորագրով մի ծավալուն աշխատություն, որն այժմյան հնագիտության հնարավորությունների պայմաններում կարելի է պատկերացնել, թե ինչպիսին կլիներ:

Այժմ, երբ տեսնում եմ վաղ հնագիտության բաժնում տիրող աշխատանքային բուռն եռուզեռը, գիտարշավներում ձեռք բերված հիանալի արդյունքները, ակամայից հիշում եմ Հ. Մարտիրոսյանի երջանիկ դեմքը, որը, կարծես, սիրով նայում է իր ստեղծած բաժնին, նրա նոր, խոստումնալից սերդին և գոհունակությամբ ժպտում: Ուրեմն, նրա հոգին մեզ հետ է:

ՍԵԴԱ ԴԵՎԵՋՅԱՆ